

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Տր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւ մեկ ծառով

Տարեկան . . 14 Տր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 Տոյար

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տողը

20 սանդիս



Լ Ր Ա Փ Ի Ր

Ա Ձ Փ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Յ Է

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

"Иравункъ"

ВАРНА (България)

Գրադարանը եւս

չեւ տրոշիք

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՆՑՈՒՂՄԱՐԶ

Ժեռն թուրքերը

Երեկ ստացանք Մէլիքեթի վերջին թիւը, ուր կը կարդանք թէ Եւրոպական միջամտութեան հակառակող ժէօն թուրքերու խումբակները միանալով Շուրաի իւն. մէք անունով թերթ մը սկսած են հրատարակել իբր օտկան այդ միացեալ խմբակին, որ ցարդ Մէլիքեթէն զատ հինգ թերթեր կը հրատարակէր: Այս խմբակի գլուխը կը գտնուի Ահմէտ Րիզա, որ իր Մէլիքեթը ամսաթերթի վերածելով, ստանձնած է նաեւ նոր օտկանին խմբագրութիւնը:

Ժէօն թուրքերու այս խմբակին վրայ մեր ունեցած հաւատքը այն է թէ՛ անոնք իրենց նպատակակէտ ընտրած են Սուլթան Համիտ մահէն վերջ շարունակել ներկայ համարական գրութիւնը, ջնջելով կամ տարջալուծելով երկրին քրիստոնեայ ազգաբնակչութիւնները: Առայժմ իրենք սահմանադրական անունին տակ կը գործեն թէեւ, բայց այդ ալ իբր գիմակ կը գործածեն: Անոնք թէ՛ Եւրոպայի միջամտութեան կը հակառակին և թէ լեզափոխութեան. և իրենք միայն խօսելով ու գրելով ժամանակ կանցնեն, սպասելով որ Համիտը մահնի և անոր ուրիշ մը յաջորդէ, որուն քղանքքին տակ իրենք ապահով ըլլան իրենց հարէմական բաղձացեալ կեանքը ապրելու:

Այժմու անոնց ջանքը զխառնրապէս մէկ բանի վրայ կը կայանայ, այն է թուրքիոյ քրիստոնեայ ազգերէն գոյութիւնը ապահովելու նպատակաւ զաշնադիրներով որոշուած բարենորոգումներու գործադրութեանը արգելք ըլլալ, գրգռելով իսլամ ժողովուրդի մոլորեցումը: Այս ճշմարտութեան ապացոյց են հետեւեալ տողերը, քաղուած Ահմէտ Րիզայի մէկ նամակէն, զոր անցեալ ամսու Մօնաքոյի մէջ գումարուող խաղաղութեան ԺԱ. Համաժողովին ուղղած էր.

«Հայ և Մակեդոնացի լեզափոխութեան գոմիթէները մասնակի բարենորոգումներ կը պահանջեն, այսինքն այսինչ կամ այնինչ ազգերու (*) համար, ուրիշները բացը թողնով, և առաջ կերթան նոյնիսկ ինքնօրինութիւն (օթօնօթ) պահանջելու, ուրիշ ձեւով անդամատութիւն: Ոսմանեան կայսրութեան (*), որուն ամբողջական ապահովումը միջազգային դաշնագիրներով ապահովուած է (*), Այս բոլոր եւսախիսակալ յառակաւորները թուրքիոյ ուրիշ ժողովուրդներուն նախանձը ու դրժգոնութիւնը ծայր աւստիանս կը գրգռեն»:

Մինչդեռ հազար անգամ գրուած, խօսուած ու բացատրուած է թէ՛ մասնաւորապէս Հայերու ջանքը ու ձգտումը մեր հայրենիքին մէջ իսլամ տարրերու հաւասար իրաւունքներ ու կենաց և ընչից ապահովութիւն վայելելու մէջ կը կայանայ, և ճիշդ ալ այս նպատակաւ գծուած Մայիս 11ի մեմօռանտումին գործադրութիւնն է որ կը պահանջենք այժմ: Ահմէտ Րիզան մեր այս ձգտումին տեղեակ ըլլալով և յիշեալ մեմօռանտումին օրինակը աչքին առջեւ ունենալով հանդերձ, կոռաւարկէ խաղաղութեան Համաժողովին որ Հայկական և Մակեդոնական խնդիրներու գոյութիւն չը տրուի—իբր թէ ցարդ ատոնք գոյութիւն ունեցած չըլլային—սպառնալով որ հակառակ պարագային թուրքիոյ իսլամ ժողովուրդը կը գրգռուի, կամ աւելի ճիշդը իրենք, ժէօն թուրքերը, կը գրգռեն իրենց կրօնակից խաժամուօր:

Արդէն մեր ուշադրութեանն են բնաւ վերադառնալէ ու կէտն ալ որ Ազատական կամ ժէօն թուրքերու թերթերը միշտ կը ջանան սուտ լուրերով և չափազանցութիւններով համոզել իսլամ ամբողջ թէ իրենց կրօնակիցները Պուլկարիոյ, Ռուսիոյ, Արեւելի և Հերսէք-Պօսնայի մէջ կը հարստահարուին տիրող ազգերէն. մինչդեռ ընդհա-

կառակը թուրքիոյ մէջ գտնուող իսլամներէն աւելի ազատութիւն կը վայելեն անոնք քրիստոնեայ կառավարութեանց տակ գտնուելով: Բայց այդ բացարձակ սուտերը հրատարակելով ժէօն թուրքերու նպատակն է թուրքիոյ մէջ ապրող իսլամները իրենց քրիստոնեայ հայրենակիցներու դէմ վրէժով վռնել, հալածանքը հրահրել, և միւս կողմէ Եւրոպան համոզել շահալ թէ հարստահարութիւնները Սուլթան Համիտի հրամանով միայն կը գործուին. մինչդեռ այդ ժէօնները Համիտին չափ ապաստանաւոր են գոյժուած խժոժութեանց, և վաղը երբ գործի գլուխ անցնին նոյնը պիտի ընեն իրենք ալ, ինչպէս իրենց աստուածացուցած Միտհատը կընէր երբ վալի էր, երբ Սատրապն էր:

Պաղտատի Երկարաշունչին

Քօնեա-Պաղտատ և մինչեւ Պարսկային ծոցը երկարելիք երկաթուղւոյ գիծին շինութեան մենաշնորհը՝ որ գերմանական ընկերութեան տրուեցաւ, Ռուսիոյ մեծագոյն գեօգրֆիկական պատճառելէ զատ Սիւրիացուց ալ շատ գէշ ազդեց: Այդ հակալ երկաթուղիին շնորհիւ ասիական թուրքիոյ մէջ գերման. քաղաքականութիւնը ու ազդեցութիւնը զօրանալով միատեղ, Ռուսիոյ Փոքր Ասիոյ մէջն գէպի Միջերկրական յառաջանալու ապագային գործադրելի ծրագիրները վեր ի վար շրջեցան. որով հետեւ Գերմանները այդ գծով պատուար մը քաշած կըլլան Ռուսիոյ քայլերուն առջեւ: Ճիշդ այս պատճառաւ Պոլսոյ ռուս դեսպանը բաւական ջանաց որ այդ մենաշնորհը վաւերացնող հրովարտակը չը տրուի գերման ընկերութեան:

Անգլիացուց հարաւային Աֆրիկէի մէջ գրադար միջոցին, Գերմանը առիթն օգտուելով, առանց շուկի ձեռք ձգեցին Պուլսէն մինչեւ Պարսկական ծոցը երկարող գծին շինութեան արտօնութիւնը, Եւրոպան ամենակարճ ճամբայով Հնդկական Ովկիանոսին միացնող այդ գիծը, քաղաքականութեանց

խնկարծական փոփոխութեամբը, կրնայ լուրջ վտանգ սպառնալ Հնդկաստանի անգլիական շահերուն: Հետեւապէս Անգլիացիք խորամանկ միջոցներու դիմելով, գերմանական գիծը իր ուղիղ ճամբայէն վրիպեցնելու նպատակաւ, այն կողմերու ինքնավար Շէյխերը գրգռեցին ու իրենց պաշտպանութեան տակ առին Շէյխ Մուպարէք-իպին-Սահիպի երկիրները և Դուռը ստիպուեցաւ Անգլիոյ հետ պայմանագիր մը կնքել, որով Անգլիացուց ազդեցութիւնը ճանշցուեցաւ Քօնէյի թիւ 2ուպէի թիւ վրայ, ուրկէ Գերմանը, ըստ Պաղտատի երկաթուղիի պայմանագրութեան, գիծը պիտի անցնէին և տանէին մինչեւ Պարսկական ծոցը, Գիծին թիւքական եզրերէնցնեցաւ իջնելու կէտերուն մօտ, Քօնէյի թիւ մինչեւ Շալ-էլ-Արապի ծով թափելու տեղերը Անգլիացիք իրենց ազդեցութեան տակ առին նաեւ կղզիներ, որոնք ցամաքէն նեղ անցքերով միայն կը բաժնուին, և կը գոցեն Քօնէյի ծովածոցը:

Անգլիացուց ստիպումով այդ երկիրները Շէյխ Մուպարէքի սեփականութիւն ճանշող պայմանագիրը ստորագրուելէ վերջ միայն Գերմանացիք իմացան դառն իրողութիւնը, որուն պատճառաւ չպիտի կրնան երկաթուղւոյ գիծը 2ուպէի թիւն անցնել և Քօնէյի թիւ ծովագլուց հոսեցնել, մինչեւ որ Անգլիացուց ո' և է կերպով գոհացում չը տան:

ԳՈՒՐՊԷՅ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գանի մը տարիէ ի վեր մեկուսացած անձնուէր լեզափոխականի մը մեղ ուղղած մէկ նամակին հետեւեալ կարեւոր մասը հրատարակել օգտակար կը դասենք:

Որքան ապրիմ և շարունակեմ տեսնել ժողովուրդները և ազգերը շրջապատող հանգամանքները նոյնքան խորապէս պիտի համոզուիմ մարդուն անկախութիւնը ապահովող պայմաններու անհրաժեշտութեան: Չեմ դադրած հետեւաբար և չը պիտի դադրիմ երբեք լեզա-

(*) Փոխանակ «այսինչ կամ այնինչ նահանգներու» ը-ն-դ-ւ-ւ, սրկայական չարամտութեամբ «ազգերու» կըսէ:

փոխական մը ըլլալէ։ Գաղափարի յեղափոխական մը ըլլալէ առաջ իբր հայ հայրենասէր պատրաստ եմ զինուորագրուելու, կռուելու և մեռնելու համար եթէ նոյնիսկ այնպէս ընելու առիթը այսօր ներկայանայ։ Դժբաղդաբար սակայն կերեւի դեռ պէտք պիտի ունենանք սպասելու։

Մէկ բան միայն ինծի գործնական կերեւի առայժմ տարագրութեան մէջ, այն է ազգային ժողովրդական հաստատութեան մը (էնսքիքիսիոն) հիմնարկութիւնը։ Դատ ուրախ եմ որ առիթը կու-նենամ ձեզ գրելու և փափաքելի է որ այս մասին ձեր կարծիքը ինձ համորդէք։

Կարծեմ ըսածս քիչ մը բացատրութեան պիտի կարօտի։ Մենք իբր ազգութիւն մեր եկե-ղեցիէն զատ էնսքիքիսիոն չու-նինք։ Եկեղեցի մը որ արդէն չա-տոնց դադարած է գոհացում տալէ ժողովրդին պահանջին։ Ես կը հաւատամ թէ քաղաքակրթութիւն-ները էնսքիքիսիոններու վրա կը հանգչին և վերջինները իտէայի-թէ առանց քաղաքակրթութեան ազգութիւն չը կրնար գոյութիւն ունենալ և առանց էնսքիքիսիոնի չկայ քաղաքակրթութիւն։ Ուրախ պիտի ըլլամ եթէ ինձ իմացնէք ձեր կարծիքը։ և եթէ ընդունիք նոր հաստատութեան մը անհրա-ժեշտութիւնը, ըսէք թէ նա գըլ-խաւորաբար ինչ էական խարխա-նելու վրայ պէտք է հանգչի, ան-տարակոյս ունենալով միշտ հիմ-ցեղին առողջութիւնը։

Պակարիա գաղթականութեան գլխաւոր կեդրոններէն մին եղաւ և տարակոյս չունիմ որ դուք մօ-տէն դիտեցիք և զննեցիք ահաւոր պակասներ մեր անհատական, ըն-տանեկան և հանրային կեանքին մէջ և անկարելի է որ պէտքը զգացած չըլլաք կամ թելադրուած դարման մը, միշտ մը խորհելու։

դարման մը որ ազգային տիպը ունենայ և որ անուղղակի կերպով կրթէ, ազնուացունէ անհատը, ներշնչելով անոր մէջ կորով և ան-կախութեան ոգի, միաժամանակ անվերջելով որ անհատական թէ հաւաքական անկախութիւն միայն յարատեւ աշխատութեամբ ու լոյս-սիրտի կիրառութեամբ կարելի է մշտնջենաւորել։

Երբ որ առիթ ունեցած եմ խորհելու ազգային այս պէտքին վրայ, զգացած եմ այդ պէտքին տարապայման մեծութիւնը և ուղ-քան մեծ դուրս մը թելադրելու հիմնարկելու կամ սկսելու համար շատ քիչ ապրած, տեսած և նոյն-քան քիչ զիտցած ըլլալս։ Սա-կայն գիտակցութիւնը թէ թե-լադրած սկզբունքիս գործադրու-թեան համար ամէն ինչ զոհելու պատրաստ եմ, և հաւատքը թէ ամէն ազգին ճշմարիտ և տարրա-կան շահը ինկատի ունեցող անձ պիտի գործակցի մեզ և կապուի սկզբունքին, ես կը քաջաբերով գաղափարը ձեզ հաղորդելու։

Ես հարցը ինչպէս որ կրմբունեմ լայն կերպով կը բացատրեմ երբոր պէտք զգաք ունենալ երկար մեկ-նութիւններ։ (*)

Արդի Հնչակեաններուն վրայ լուրի գաղափար ունենալու պատճառ չեմ ունեցած։ Լսած պէտք է ըլլաք, ար-դէն հիններու և նորերու միջև միութիւն մը գոյացած է, իրողու-թիւն մը որ ինչ պայմաններով, ինչ գնով որ ալ ձեռք բերուած ըլլայ գովաստի և համակրութեան արժանի է։

ՎԱՐԺԱՊԵՏ ԿՈՒՉՈՒԻ
Տօգրիչի Ազգ. վարժարանի ուսու-ցիչը հիւանդութեան պատճառաւ հրաժարած ըլլալով, այժմ տեղւոյն յարմար ուսուցիչ մը կուգորի։
Իրմէլ տեղւոյն հոգաբարձութեան։
(*) Կը սպասենք բացատրութեան։
ԽԱՐ.

ՅՐԱՆՍԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեզ չը պատկանիր հոս ներքին քաղաքականութեան տեսակետով չատագովել Յրանսական բնորո-թիւնները։ Բայց անոնք բոլորո-վին նպաստաւոր եղան հայկական խնդրոյն բարեկամներուն։ Տեաք Տընի Կոչէն, տ'էյթորնէլ տը Գոնսթան և Մաուէլլ Սըմպս-փըրընտրուեցան քուէարկութեան առաջին շիջանին, ինչպէս նաեւ Տ. Ժան Ժոսէս, որուն խորհա-ձայնը չը դադարեցաւ վերջին նստա-շրջանին մէջ և որ վերստին կու-գայ իր ճարտասանութեան բոլոր ուժովը պաշտպանել ճշուած ժո-ղովուրդը։

Տիար Կիւսգալ Ռուանէ կի-րակի օր վստահապէս պիտի վեր-ընտրուի, և մենք խորին բերկ-րութեամբ պիտի ողջունենք խօ-սարանին մէջ մուտքը, որ այժմէն ապահովուած է, մեր ամենասի-րելի և ամենալարգելի բարեկամին և աշխատակցին Յրանսէ տը Բոէ-սանսէլի, որ, Միւտտոյ Յրանսի ար-տայայտութիւնները գիւրըմբռնելի ոճով մը վերսկսելու համար, մեծ ծառայութիւններ պիտի մատու-ցանէ Հայաստանի տիեզերական քաղաքականութեան մասին իր հիմնութեամբ, իր բարձր և լայն իմացականութեամբ, իր սրտի վեհութեամբ և իր անուսմանի հաստատամտութեամբը։

Պ. Կապրիէլ Հանթը արգարու-թեան անձնատուր եղած, կերեւայ թէ քաղաքականութեան ձեռքա-շած է։ Պ. Տէլքասէ իրեն պատիւ համարած է քննարկան իր շրջա-բերականին մէջ նշանակել «տկար-ներու պաշտպանութիւնը քաղ-լալը»։ Կը յուսանք թէ անոր վե-րստին իշխանութեան անցնելը օգ-տակար պիտի ըլլայ հայ ժողո-վուրդի փրկութեան ինչպէս հղա-աւելի առաջ կրետական ինքնավա-րութեան հաստատման առթիւ։
(Բոս-Առնկէիա) Ռ.

ՓԱՍՏԵՐ ԵՒ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒՄԼԱՅԻ ԽԱՌԵԱԿԻՉՆԵՐԸ
Պաշտօնական

Իրաւունքի մէջ փաստերով հաստա-տեցաւ, որ «Վասակ Սիւնի» կատար-եալ իմաստակ մըն է, որով ժողո-վուրդը հասկցաւ թէ՛ ո՞վ է եւ ի՞նչ նկարագրի տէր մէկն է Շումլայի ազ-գային գործերը խառնակել ուղղող եւ հանրութեան մտքերը պղտորելու ձեռ-տոյ Շ. . . թղթակից այս ախուր քննադատը։

Քննադատը մը ամենէն առաջ ի հարկէ-կը պահանջուի ուղղամտութիւն, ան-չաճախութիւն եւ որ ամենէն կա-րեւորն է փաստեր եւ վկայութիւններ, գիւրիւն է այս կամ այն հարցի մասին, այս կամ այն անձի դէմ գրել, բայց առանց փաստի գրուածները միշտ կը մնան մեռած ստուեր, եւ պատմու-թիւնը չարախօսութիւններով, չահա-սիրական միտումներով ժողովուրդը մոլորեցնելու եւ իրենց չար կրքե-րուն ծառայեցնելու ձգտող քննադատ գրչակներու անուանը կարճանագրէ վատերու անուանց չարքին մէջ։

Մենք իրազեկ Շումլայի մէջ կա-տարուած բոլոր անցքերուն, տեսնե-լով որ Շ. . . թղթակից «Վասակ Սիւնի»ն ոչ թէ կրթասէր քննադատ մը, այլ խառնակիչ մը, պաշտօնի մուրացկան մըն է, ուստի մենք յա-նուն հանրային շահերու եւ կրթական գործերու յառաջացման, ասիպուած ենք կատարել մեր նուիրական պար-տականութիւնը, այն է հիմնուած փաստերու և օգտիւններու վրայ, ի-րականութիւնը ներկայացնել այն-պէս, ինչպէս որ կայ, որպէս զի ընդ-հանրապէս հայ ժողովուրդը եւ մաս-նաւորապէս Շումլայից ծանչնան ի-րենց բարեկամները։

Խնդիրն այժմարձեցաւ Շումլայի մէջ երկու ընթերցարաններու գոյու-թիւն ունենալու հարցին։ Իրաւունքի թղթակից «Գաղթական»ը «Մի խաբ-ուիք» խորագրով յօդուածի մը մէջ մի քանի հարցումներ կուղղէր «Պետո-Պուլկարացի» գլխաւոր վարչիւններու եւ մատնանիշ կընէր, իբրեւ կրթասէր եւ իբրեւ յեղափոխական, անոնց հա-կասական գործունէութիւնը։ «Պետո-Պուլկարացի»ի գլխաւոր գործը պրծաւ

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (17)
ԹԻԱՊԱՐՏԸ
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
ՎԱՍԻ ՓԱՇԱ

Թիկնապահը չխօսեցաւ։ Ապուշ նաչ-ուածքով մը իր սիրելի տիրոջ իրեւր նայեցաւ ու զարմացաւ։ Երբէ՛ք որ մը չէր եղած որ ատանկ խնդիրներու վրայ խօսէր, ատանկ գաղափարներ ու-նենար խեղճուկ ու մեռած հայ ժողո-վուրդին վրայ։ . . .

Այդ պահուն փաշային դրանիկներէն մին կամացուկ մը գուռը բացաւ, գետնաքարէ զարեւ մը տուաւ կատար-եալ լրջութեամբ մը, մօտեցաւ ու սպասեց որ հարցնէին թէ ի՞նչ կու-զէր։

— Ի՞նչ կայ, ըսաւ վալին նեղացած ձայնով մը։

— Հայ Բահանայ մը կայ վարը, փա-շա էֆէնտի, զողղզած գրանիկը խեղճ չունի մը պէս որ երկու ոտքե-րուն վրայ կեցած աչքերուդ մէջ կը նայի։

— Ի՞նչ կուզէ . . . նկատել տուաւ վալին։

— Կուզէ ձեր վսեմութիւնը տեսնել։

— Բե՛ր այստեղ։

Դրանիկը նոյն ձեւով բարեւեց ու գուռը ելաւ։ Քիչ յետոյ ներս մտաւ Բահանայ մը, որ Ա. . . գեղին նորընծայ Տէր Կարապետն էր։

— Հա՛, դո՛ւք էք, փափազ էֆէն-տի, ըսաւ փաշան արհամարհական ձայնով մը։ Նստեցէ՛ք։

Տէր Կարապետ, որ հաղիւ երեսուն տարու, բարձրահասակ, նիհար ու տգոյն զիմագներով անձնաւորութիւն մըն էր, յարգական բարեւէ մը ետքը նստեցաւ բազմոցին վրայ։
— Այսօր եկա՞ք, հարցուց վալին։
— Այո՛, փաշա էֆէնտի։
— Ինչպէ՞ս է գեղին վիճակը։
— Ձեւ վսեմութեան չնորհիւ, շատ խաղաղ է։

— Ի՞նչ օգուտ . . . յանցանքը ձերն է։ Դուք ժողովուրդին չէք խրատեր որ ասանկ անարգ չարագործութիւն-ներ չընէ։

— Ի՞նչ ըսեմ . . . միտակ իմ ձեռքս չէ։

— Հապա որո՞ւ ձեռքն է։

— Ես որչափ ըլլայ այնքա՛ն չեմ կրնար ազգել ժողովուրդին վրայ, քա-նի որ ինչ մեծը կայ գեղին մէջ։

— Ո՞վ է։

— Տէր Օհան։

— Տէր Օհան . . .

— Այո՛։

— Չէ՞ որ անիկայ բանտարկուած էր։

— Ընդէ է, բանտարկուած էր։ Բայց հարցաքննելով հասկեր եւ որ անպարտ է եղեր, հետեւաբար չարաթ մըն է գեղն է։

— Այդ ուրիշ . . . է՛յ, ի՞նչու ան չուզեր խրատել։

— Փոխանակ խրատելու, ժողովուր-դը կը գրգռէ։

— Որո՞ւ գէմ։

— Կառավարութեան գէմ։

— Յայտնի՞ կերպով։

— Իհարկէ՛։

— Սոսկալի բա՛ն, ինչե՛ր կըսէ։

— Ինչե՛ր պիտի ըսէ . . . անոր ըսածին նայելով երկրին մէջ գէնքեր պիտի մտնեն, հայ զինուորներ պիտի ըլլան, Պօլսոյ պատերաբէն հրա-մաններ պիտի կարգացունեն . . . վեր-ջապէս անանկ խաբէական խօսքերով կուզէ բոլոր գեղացիները կառավա-րութեան գէմ հանել որ աշխարհիս յիմարն անգամ չըներ։ Այդ պատճառաւ ստիպուեցայ ձեր վսեմութեանը դիմե-լու, գիտնալով որ այդ մարդը քաղ-քին մէջ հարուստ վաճառականներ ու-նի իրեն կոնակը։

— Անհոգ եղէ՛ք . . . հարկ եղածը պիտի գործադրուի։ Գաղէ՛ք ձեր գոր-ծին ու աշաւուրջ գտնուեցէ՛ք։

Տէր Կարապետ իր նպատակին հասած էր։ Անիկայ կուզէր Տէր Օհանին կոր-սուելին, որպէս զի գեղին տէրը ըլլար։ Ուստի ուրախութեամբ մեկնեցաւ քա-ղաքէն։

— Տեսա՞ք, Ահմէտ Պէ՛յ, բացա-զանչեց վալին խոռվայոյդ ձայնով

մի ինչ որ Վասակ, որ փոխանակ
«Գաղթական»ին պատասխանելու,
սկսաւ մոկեցնած գաղանի մը նման
սար ու ձոր իյնալ ու աս ան խած-
նել: Թաղականութիւն, Հոգաբար-
ձութիւն, Տնկնանց խնամակալու-
թիւն, Ուսուցչական խումբ եւ այլն,
ամենքը լեցուց մէկ աւագանի մէջ եւ
Պետո-Պուկարացի գլխաւէն վերցուցած
ապրիտութեան ներկով ներկեց, կար-
ծելով թէ՛ այդպէսով հերքած կրլայ
գաղթականի ըրած դիտողութիւնները
որոնք միանգամայն արդարացի են եւ
մենք պաշտօնագէտ կը հաստատենք:

«Պետո-Պուկարացի» գլխաւի վա-
րիչները շատ հեռի են կրթաւէրներ
ըլլալէ, բնականապէս, ոմանք ի-
րենց բաժնեկիները վճարել չուզել-
նուն համար արտաքսուած են, ու-
մանք ալ իրեւ խռովարարներ վտար-
ուած են ազգային ընթերցարանի
վարչութիւնէն, այս մասին ունինք
տագիւմաններ, որոնք ի պահանջել
հարկին պիտի կրնանք մէջտեղ բե-
րել:

Արեւի պէս պայծառ է նաեւ, որ
ինքզինքնին յեղափոխական եւ Դաշ-
նակցական անուանող «Պետո-Պուկա-
րացի» գլխաւի վարիչները, իրենց
չար կերքերուն յագեցում առլու հա-
մար կը շահագործեն ու կը սրբապղծեն
կարծադանի վրայ անշնչացողին ա-
նունը, քանի որ իրենց մէջ կը գտա-
նուին անվտանգելի եւ բարոյականէ
դուրկ մարդիկ: Ռուսմանիոյ, Պուկա-
րիոյ նաւամատոյցներու վրայ բեռերու
տակ հայող ու մաշուող Հայաստանցի
բանուորներու արեւը ծծող տղուկ-
ներ: Ձեռքի տակ ունինք Տաւրուսի
հաւաքածոյն եւ Արտաշէս Կարապետ-
եան, Պետրոս Մովսէսեան նաեւ Վա-
սակ Սիւնի անունները կրող եւ խա-
չաքող տիրոջն արժանացած, հրե-
շակաւոր իմաստակիր գաւառացիներուն
բաժնած ու անոնց դրամները շորթած
ըլլալն ապացուցանող, մի ինչ որ
երեւակայական «Կարմիր Ուաշի» ըն-
կերութեան տոմսակները, որոնք մեզ
համար Արտաշէս Կարապետեանի տխուր
անցեալը ապացուցանող անխորտա-
կելի փաստեր են:

Ասոնցմէ զատ մեծ յոյս ունինք
նաեւ, որ այս պարոնի անցեալ գոր-
ծառնութիւններու մօտէն տեղեկալ ան-
կեղծ հայրենասէրներ, յանուն հան-
րային շահերու Պուկարիոյ այլեւայլ
քաղաքներէն մասնաւոր տեղեկագրե-
րով պիտի փութան հաստատել եւ

մը. չէի՞ ըսեր թէ գաղտնի դաւադրու-
թիւն մը կը գառնայ Կոտակարութեան
դէմ: Հաւատացէք որ այս տասներկու
տարուան մէջ մեր բոլոր դիտաւորու-
թիւնները Հայերուն ճանթ են: Ըսել
կուզեմ թէ հայ ժողովուրդը համոզ-
ուած է եւ գիտէ որ մեր նպատակը
բնաջինջ ընել է զինքը... Սուտ
չէ, երբ հայ քահանայ մը իր գե-
ղացիներուն կըսէ թէ Պուկի պատրի-
արքէն հրամաններ պիտի գան ու ե-
կեղեցիներու մէջ պիտի կարդացուն
ատանկ գաղափարներ ունին:

Վալի փաշան այս բաները խօսելով,
դիտաւորութիւն ունէր իր թիկնա-
պահին սիրտը լեցունել, որպէս զի
Չինուորական հրամանատարին հետ
չըլլազայեւու ելնէին նահանգին ամեն
կողմեր, ուսումնասիրէին ժողովուրդը
ու, վերադարձած ժամանակին, ի-
րեն հարկ կ'ըրէ տեղեկութիւնները տա-
լին:

Մօտաւորապէս երեք տարի էր, որ
Բարձրագոյն Դուռնէն Վալի նշանակ-
ուած էր ինքը: Խորին ատելութիւն
մը ունէր հայ ժողովուրդին դէմ: Իրեն

լուսաբանել այս ձրիակերի Շումլայէ
դուրս գործած նախճիրները: Առայժմ
միայն այսքանն ըսենք, որ այդ մար-
գուկը, Պուկարիոյ քանի մը քաղաք-
ներէն գիշերանց մեզապուր փախած
է, յեղափոխական մասնաճիւղերու
վճիռներէն աղատելու համար, իսկ
վերջերս ալ գիւղի խանութթ փակե-
լով չնչապառ քաղաք փախաւ, ու
տեղս հասած օրէն իսկ սկսաւ պառակ-
տող սերմեր ցանել ժողովրդեան ամեն
խաւերուն մէջ, ինչպէս ըրած է 1892
թուականներուն եւ Շումլայի ազգա-
յին վարժարաններու փակուելուն
պատճառ դարձած է (Տես Արմէնիս
1892 թուականի 61, 62, 72, 75
համարներու մէջ «Հայը» ստորագրու-
թեամբ Շումլայէն գրուած թղթակցու-
թիւնները եւ Արտաշէս Կարապետեանի
նկատմամբ «Ընդդիմախօսութիւն» խո-
րագրի տակ գրուած առաջնորդող յօդ-
ուածը):

Այս պատուած աղուէսը, որ տարի-
ներ առաջ կրթական նախարարի հրա-
մանով արտաքսուեցաւ ազգային վար-
ժարանէն, այժմ յառաջիկայ տարի,
ըստ իր փոքրաթիւ արբանակներու
խոստման, ուսուցիչ րնտրուելու շա-
համովական երեւակայութիւններով
շաղուուած լղբուկ յօդուածներ կը
թխէ այնպիսի գործիչներու մասին,
որոնց արժանիքն անչափանդիր եւ
պատուաւոր մարդոց կողմէն օր աւուր
գնահատուելու վրայ է, եւ մենք
վստահ ենք, որ ի մեծ անհանգստու-
թիւն համայն աշխարհը տգէտ կարծող
Վասակ Սիւնիին, նոյնը պիտի ընէ
նաեւ ընթերցողը, երբ յաջորդաբար
կարդայ անոնց գործունէութեան իս-
կական նկարագրութիւնը:

Թաղականութիւն Շումլայի
Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
(ԿնիՔ եւ Ստորադպրութիւն)
Շումլա, 28 Ապրիլ

Մէկ օրինակը ուղարկուած է Ե...ի:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաքուի Հայերը Մայր Աթոռի
հաւանութեամբ եկեղեցի մը շինել
որոշած և յատկապէս զատորաս
տած ըլլալով, ըստ օրինի ներկա-
յացուցած էին Կովկասի կառա-
վարչին և բարձրագոյն վաւերա-

համար ամենաստորին գնջուն անգամ
հայէն բարձր էր: Կ. Պօլիս եղած ժա-
մանակ իր ատելութիւնը կրնար ար-
տայայտել, իսկ Վանի մէջ կը ծածկէր,
որովհետեւ հոն տիրող տարրը հայ ժո-
ղովուրդն էր:

Բայց հիմակ ատենն էր, ուր իր
հոգւոյն գարշութիւնը պատկերացէր:
Ատենն էր, ուր հայը ջախջախելով իր
ոտքին տակն առնէր, անոր գլուխը
ճգմէր, անոր արիւնը ծծէր ու այդ
իրեն ատելի եղած տարրը բնաջինջ
ընէր՝ գոնէ՛ Վանի նահանգին մէջ, ու-
րուն տէրն էր, իշխանն էր, լիտգոր
կարաւորներն էր ինքը:

Ուստի երբ թիկնապահ Ահմէտ Պէյ
միկնեցաւ, ինքը կատաղի ոճրագործի
մը պէս ձեռքերը վեր վերցուց ու ինք-
նիրեն պոչեց:

— Հայեր, հայեր... պարապ տեղ
կաշխատիք. հոս ձեր գլուխը ես պիտի
ճղմեմ... իսկ մնացած գաւառներու
մէջ՝ ուրիշ մը...:

Ու փոքրած բերանը սրբելով զահ-
լիճէն դուրս ելաւ:

ցումն ալ ստացեր էին ներքին
գործոց նախարարութիւնէն: Բայց
Պաքուի Ռուսաց եկեղեցիի աւագ-
քահանան Իւնիցքիյ խնդիր կը
հանէ թէ Հայոց եկեղեցիին յա-
տակաբիժը աւելի ընդարձակ չէնք
մը կը ցուցնէ քան ինչ որ է Պա-
քուի ռուսաց նսրակառոյց եկեղե-
ցին, և թէ պէտք չէ որ Հայոց ե-
կեղեցին աւելի մեծ ըլլայ Ռուսաց
եկեղեցիէն, քանի որ նոր պիտի
շինուի: Այս առարկութեան վրայ
յատկապէս ներկայացուեր է
վրաստանի էկզարքին, քանի որ
Պաքու վրաստանի եկեղեցական
բաժնին մէջ է Ռուսաց համար:
Հի՛ժա չը գիտցուի թէ կառավա-
րութեան հաստատուած այդ յա-
տակաբիժը պիտի փոխուի թէ ոչ:
Պէտք է գիտնալ թէ Պաքուի մէջ
Հայերը Ռուսներու կրկին թիւը
կը կազմեն, հետեւաբար մեծա-
գոյն եկեղեցիի պէտք ունին:

Չենք հասկնար թէ ո՞ր դարու
մէջ կապրինք:

— Խառն ժողովոյ վերջին նիս-
տին մէջ Տ. Գրիգորիս Արքեպիս-
կոպոսի հարցման պատասխանելով
Պատրիարքը կարգ մը բացատրու-
թիւններ տուած է Կիլիկիոյ Կա-
թողիկոսական ընտրութեան գոր-
ծողութեանց առժամապէս յետա-
ձգուելու պարագաներուն վրայ:
Յայտարարած է թէ ընտրութեան
պատուիրակ Տ. Յակոբ Աշոտ Եպս.
Պատրիարքարանին հրամանին կը
սպասէ Պոլիս գալու համար: Յոյս
յայտնած է թէ քիչ օրէն հարկ ե-
ղած կարգադրութիւնները պիտի
ըլլան:

— Սիսէն վարդապետ մը զըր-
կուած է Այլթապ թեմական գոր-
ծերը վայելելու համար. մանա-
ւանդ թէ փիլիպոսեան աղանդը
վարդապետի մը ներմայութիւնն
Այլթապի մէջ անհրաժեշտ ըրած
է:

— Այս տարի Երուսաղէմի հայ
ուխտաւորաց թիւը միայն 780 ե-
ղեր է, մինչդեռ անցեալ տարի
հազարէ աւելի էր:

ԼՈՒՐԵՐ

Արեւը նոր ծագած էր:
Վան՝ իր գեղածիծաղ տեսարաններու
ու յանկուցիչ բնութեանը մէջ, կը
ժպտէր առջին տարածուած կապոյտ
ու միապաղաղ ծովին վրայ նայելով:
Այդ պահուն Հայկականը կոչուած
արեւարձանին մէջ բնակող Լուսիա՝
իր գեղեցիկ ու լայն արեւակին վրայ
գրուած ծաղիկ թաղարները կը ջրէր:
Օ՛հ, որչա՛փ փոխուած էր այդ ման-
կամարդ աղջիկը... Չքնաղ ու նու-
սերանգ այտերը մեղամախճութեան մը
թանձր ստուերովը պատած էին. այն
հմայիկ ու աղօր աչքերը խոր ինկած
էին. վարդուրակ չըթուէր կորսնցու-
ցեր էր իր թ. սրմութիւնը. նայուածքը
միջնցած էր. լայն ու գրգռի ճակատը
գառնութիւն մը ունէր...:

Ի՞նչ անցած էր այդ ագնիւ. ու կոյս
հոգիէն... Ի՞նչու համար քանի մը
ամսուան մէջ այդքա՛ն կերպարանափոխ
եղած էր ան... անա՛ ամենէն ծանր
հարցը:

— Կրօն, ժողովն իր վերջին
նիստին մէջ նկատելով, որ Ս. Սա-
հակ Հայրապետի դամբարանին շի-
նութեան համար Մշոյ Պատրիար-
քական փոխանորդին ղրկած տե-
ղեկագիրը առայժմ անգործադրելի
է, քանի որ 1,500 ոսկիի պէտք
կը զգացնէ, որոշած է այս մասին
ամենապարզ ձեւ մը ընտրել, նո-
րոգութիւնն ի գլուխ հանելու հա-
մար: Արգէն լաւագոյն կարգադ-
րութիւնն ալ այս է, քանի որ
բարբարոս երկրի մը մէջ կառուց-
ուելիք մեծածախս չէնք վայրենի
ցեղերէ քանդուելու վտանգին են-
թակայ է առայժմ:

— Տիգրակէ կը գրեն:

«Կաշկազի մէջ տպուած է հե-
տեւալը. «Ապրիլի 21ին, առա-
ւօտեան ժամը 11ին, Բագու քա-
ղաքում, Հայոց տաճարի առաջ
գտնուած հրապարակում, հաւաք-
ուել էր մի քանի հարիւր հոգուց
բաղկացած ամբոխ, աղաղակ էր
բարձրացրել և դէս ու դէն էր
ցրում յեղափոխական բովանդա-
կութիւն ունեցող թերթիկներ:
Ոստիկանութեան ձեռք առած մի-
ջոցներով և դուրս կանչուած կա-
լականների օգնութեամբ, կարգը վե-
րականգնեց: Բռնութիւններ չե-
ղան: Չերբակալուած են երկու
հոգի»:

— «Այսօր, Ապրիլի 25ին, Թիֆ-
լիսի դատարանական պալատում
նշանակուած է Բագուի Հայոց
Մարդասիրական ընկերութեան
յարուցած դատի քննութիւնը:
Յըշեալ ընկերութիւնը դատ է բաց
արել Բագուի նահանգի ժողովրդ-
դական դպրոցների տեսչութեան
դէմ նրա համար, որ վերջերս յիշ-
եալ ընկերութեանը պատկանող
եռյարկանի շէնքը գրաւել էր,
ընդունելով որ այդ շինութիւնը
Բագուի Հայոց ժեպկան դպրոցին
է պատկանում: Մարդասիրական
ընկերութեան կողմից գործի պաշտ-
պանութիւնը յանձնուած է երդ-
հաւատ. Պ. Պ. Քալանթարեանին
և Չեմեսովին»:

(Շարունակելի)

— Մոսկովաէ կը գրեն .

«Ամենատեղեակաղբերից կարող ենք հաղորդել, որ Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհուրդը որոշել է նպաստել տեղումս բացուելիք եկեղեց-ծխական դպրոցին, տալով տարեկան 3,000 ական բուրձի: Նոյն խորհուրդը որոշել է տալ նոյնպէս 3,000ական բուրձի Պարսկաստանում բացուելիք դպրոցներէ համար, որոնց օգտին տեղիս հայ վաճառականներէ մի մասն եւս մեծ թէ փոքր գումարներ է նուիրել, իսկ տիկիններ քանանեանց վարժապետ և Պապովեան Տիւրուհի նուիրել են ամեն մինը 4,000 բուրձի»:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐՔԻԱ

Սթանպուլ բուս էլչիսի Մ. Զինօքիէվ շու սըրա Բուսիայա կիթմէք իչիւն բուսսաթ ալմազ նիյէթինտէ իքէն, Ֆերմիլեանըն տես բօթլըզ մէսէլէսի հալլ օլընմագտան էվլէլ կիթմէմէք գարարընը վերմիշ տիր: Մէզքիւր մէսէլէտէ պուկար հիւքիւմէթի հիւսնի թիզա կէօսթէրմէքտէ իմիշ իսէտէ, էհալինին էֆքեարընը թէսքին իտէպիլմէք իչիւն, պիր ազ վագըթ մէսէլէնին թէէլիթ օլընմագընը թալէպ էլլէմէքտէ պուլընթօր: Պուկար էվլըրքը հէր նէ գատար իտտասընտա սէպաթ իթմէքտէ իսէտէ, օնըն տախի օլմուշ պիթմիշ օլան պիր վագալը գապուլ իթմէկէ մէհպուր օլաճաղընը թալըն Սթանպուլ մուսպիլի պիլտիթիթօր:

— Թառաստա զուհուր իտէն իխ թիւլալթը թէսքին իչիւն Պապը Ալի էմին բաշալը օրայա մուվագ գաթ վալի նասպ իթմիշ տիր:

— Ֆրանսըզ մաթլուպաթընըն իքիւն թագսիթի 31,500 լիւրա կէօմրիլքէրտէն էօտէնիլտիկի Սթանպուլտան թալնա պիլտիթիթի Սթանպուլ տիր:

— Ֆրանգթօրքէր Ֆայրուկըն պէյանը իւզըէ, Երուսաղէմտէ ի թալիալը կաթուրիկ րահիպլէր վէ Բուսլար պէյնիտէ վուգու պուլան իխթիւֆտան տօլայը, իթալիալըլար թարաֆընտան մէսէլէյէ միւտալէլէ իթմէք հագգը իթալիալ գօն սօլոսընա ալիտ օլտըղընա տայիր Սուլթան պիր իրատէ չըգարմըն տըր: Ֆրանսըզ էլչիսի պու իրատէյէ գարըն չէտիտ պիր բրօթէպթիւմէ եօլլալուպ, Շարգտա կաթուրիկէլէլին հիմայէսի Ֆրանսայա ալիտ պուլընտըղը Պապը Ալինին գապուլ իթալիկինի վէ Պէրլին ահտ նամէսիլտէ մուգարրէր օլտըղընը կէօսթէրմէքտէն մուտալ, կէչէն սէնէ պիր վագաաաա իթալիալ Տէվլէթի տալի, պիւա իթիւրազ, Շարգտա կաթուրիկ րահիպլէրին Ֆրանսանըն հիմայէսի ալթընտա

պուլընմագընը գապուլ էլլէմիշ օլտըղընը վիթր իթմիշ տիր:

— Ելէնէրալ Նազըմ բաշա Ֆուատ բաշա իլէ միւթթէֆիկ պուլընմագ թէօհմէթի իլէ, մէսէք վէ րութ պէլէրինտէն իսգաթ վէ ալթր սէնէ սիւրկիւնիկէ մաճըիւմ օլմըն տիր: Մէրգուլ Նազըմ բաշանըն բէք մուգթէտիր վէ մէօթէպէր պիր գաթ օլտըղընը Ալման Նալաս թաաաթ իտէթօր:

— Երուսաղէմտէ պիր մէքթէպ թէսիսինէ միւտաաէ օլընմագը պապընտա Մ. Ամերիկա տէվլէթինին արզու վէ թէլլէֆինէ Պապը Ալի գարշը կէլմիշ վէ էնէպի թապապարըն վիւալէթլէրտէ իսքեան իթմէլէրինի իտէմէտիկինի սէպէպ կէօսթէրմիշ տիր: Քէզա Ալմանլարըն Ամասիատա էմաք սաթըն ալմագ արգուլարընա մուսալէֆէթ կէօսթէրիլտիկինի Ալման Նալաս Սթանպուլտան պիլտիթիթի տիր:

— Ելէմէն շու կիւնիլէրտէ ըստան բէք պէօլիւմիշ տիր: Սանաա շէհ. ի պիր վագըթտան պէրու մուհասէրէ օլընմըն տը:

Ասրլարըն սէրքէրտէսի Համիտ էտտին պաշընտա (150,000) եիւզ էլլի պին քիշի Մարթինի թիւֆէնկէլըլէ վէ թիւրքլէրտէն ալընան թօրլարլէ սիւալը օլարագ, Սանաալ ֆէթի իթմէքտէ օլտըղընտան, Ելէմէն վալիսի Հիւսէլին Հիլմի էֆէտի տէվլէթի էլպիսէսինի կիլինուպ, թէպտիլի գըլաֆէթլէ Հօտէլտայա գաշմըն տըր:

— Հալէպ վալիսի ճանիլի մէհհուր էնիս բաշա Հալէպին պէլէտիյէ իչիսի իլէ շէրիք օլարագ, էքմէք ֆիյալթընը արթըրմըն օլտըղընտան, իալա մէհալի իխթիլալ գալտրուպ տիւքեանլարը եաղմայա վէրմէք իթմէմիշ իսէտէ, ասքէր գօմանտանը Ալի բաշա պիլ միւտալէլէ էհալիի տաղըտմըն տըր:

ՄԱՔԷԹՈՆԻԱ ՎԷ ԱԼՊԱՆԻԱ

Ալպանիատա վէ Մաքէթոնիատա օրօնօմի իտարէսի թէչքիլ իթտիր մէք իչիւն թէչքիլ իտէն պիր գօմիթէնին միւրէվիթի էֆքիարը պուլընան օրօնօմի նամ կաղթաալ մէքիւր գօմիթէ թարաֆընտան Պապը Ալիյէ կէօտէրիլմիշ օլան պիր իալահաթ ճէտվէլի նէշր իթմիշ տիր: Մէզքիւր ճէտվէլտէ պաշընա թիլտէքի չարթլար մուհարրէր տիր:

1. Սէլանիք, Պիթօլիա, Գօսօվա, Շքօտրա վէ Եանեա վիւալէթլէրին Սուլթանըն հիւքիւմտարըղը ալթընտա պուլընմագ շարթը իլէ, օթօնօմի ուսուլի իլէ իտարէ օլըն մալարը:

2. Գօսօվա, Պիթօլիա վէ Սէլանիք վիւալէթլէրին Մաքէթոնիա իսի իլէ, վէ Շքօտրա վէ Եանեա վիւալէթլէրին Ալպանիա իւնվանը իլէ եաա օլընմալարը:

3. Մէզքիւր էյալէթլէրին սի.

նօրլարըն էնէպի տիւշմանլարտան մուհաֆազա իթմէք հագգ ու սէլահիլէթի օսմանլը տէվլէթինին ասքէրինէ ալիտ պուլընմագը Ֆապաթ տալիլի իտարէ ու ինզի պաթընըն եէրլի էհալիտէն մէգհէպ վէ միլլէթ թէֆիլի իթմէք սիզին, թէչքիլ օլընմագ գապթիլ վէ միլլէթիա էֆրատ վէ մէմուլարընա մուհաֆիլ պուլըն մաալ:

4. Էվրօբանըն պէօլիւք տէօվլէթլէրինտէն թալին օլընմագ պիր սէր-գօմիթէրին տիկէր մէմուլարըն նասպ ու թալին իթմէք սէլահիլէթինէ հայիլ պուլընմագը:

5. Սուլթանըն իճագէթի իլէ էվրօբալը միլթէսարըֆլար (կուլէրնալթէթ) թալինի:

6. Էվրօբալըլարտան միւթէչքիլ պիր գօմիթէն վասթաթ իլէ, Պապը Ալի իլէ պիլ իսթիշարէ է. յալէթին վէրկիլէրի թէթիլպ վէ թագսիլ իտիլմէսի, վէ քէզա օսմանլը տէօվլէթինէ էօտէնիլմէսի լաղըմ կէլէն սէնէվի թալիսիալթըն թալինի:

— Մաքէթոնիատա թարանքօքէօլիւտէ պուկար գօմիթալար վէ Թիւլք տաքէրի պէյնիտէ շէտիտ պիր միւտաաէմէ վուգու պուլարագ, թիւրքլէրտէն 150 քիշի Պուկարլարտան եալընըգ պիր գաշքիլ տիւշմիշ օլտըղընը Նօվիլի եաղմըն տըր:

ՏԱԽԻԼԻՅԷ

Թիւրքիա սինօրընա եաղըն, Պուկարիա արս զիսինտէ թիւրք վէ պուկար ասքէրլէրի պէյնիտէ պիր գալկա վուգու պուլուպ, թիւրքլէրտէն իքի տաքէր էօլմիշ, Պիլալէրէ տիկէր պիր թագըմ թիւրք ասքէրլէրի ելթիլուպ, մէզքիւր իքի էօլիլի գալտըրմագ իսթէմէլէրինտէ՝ հէնիտէն միւտաաէմէ վուգու կէլուպ, իւշ թիւրք տաքէրի տալի թէլէֆ օլմուշ:

— Սիլիստրէտէ, Մալիս Կտէ, իվան Տօյլէֆ վէ հէմիլիթէսի էլէնա քէնտի քէնտիլէրին ըվօվլէրլէ թէլէֆ իթմիշ օլտըղարընը Նօվիլի եաղմըն տըր:

Պու վուգուլթաա վիգալէի նա մուս մէսէլէսի հըսս օլընթօր:

ՖԻՐԱՆՍԱ

— Մարթինիք ֆէլարէթլատէ կեանը իչիւն թալն կաղէթաթը իտարէ խանէսինէ կէօտէրիլմիշ օլան իանէլէրին մըգտարը, կէչէն ճուսա իրթէսի կիւնիւնէ գատար 54,000 ֆրանգա պալիլ օլմուշ տըր:

Միւթէմէքեթ նաղըրընա թէսլիմ օլընան իանէլէր 450,000 ֆրանգա ելթիլմիշ տիր:

— Ֆրանսա ճուհուրիլթ իչիլիսի Մ. Լուպէ, Էանայի րահտա, րադիպ օլտըղը վագօրտան թէլիլի թէլէկրաֆլէ Բարիլ իլէ մուսապէրէ իթմէքտէ տիր:

ԹԻԻՐՔԻԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 8 Մայիս
ԶԱՆԻՐԷ

ՊՈՒԼՏԱՅ	
Վալոն լիպ. 49.53 հքթ. 7. —/ 8. —	
Արապա լիպ. 48-58 հքթ. 8. —/ 10.40	
ԱՐԱՅ	
Վալոն 100 քիւր 10.40/10.60	
Արապա 35-45 լիպ. հքթ. 7. —/ 7.20	
ԵՈՒԼԱՅ	
Վալոն 100 քիւր 13. —/ 13.20	
ՖԱՍՈՒԼԱ 100 քիւր 10. —/ 18. —	
ԶԱՎՏԱՐ 7.80/ 8. —	
ՄԻՍԻՐ	
Արապա լիպ. 54-58 հքթ. 7.30/ 8. —	
Վալոն լիպ. 100 քիւր 9.80/10. —	
ՏԱՐԸ 8.20/ 8.40	

Կիւնտէ 2-3 վալոն կէլլէքտէ տիր: Վալոն մուսթլէսի ալթուս ֆըրանքլէ, արապա կիւմիլլէ, Նարօլէսն 22-40 հիսապը իլէ:

ԲԱՄՈՒՔ

Վարնա մաղաղասընտա իբլիք սաթըլարը:	
Ինիլիլք իբլիկի Ն. 8-14 10. —	
» Ն. 18-24 12. —	
Եէրլի իբլիք Ն. 8-14 9.30	
Աթըլըն բամուք հօդա 1.80	
Բամպուկ ֆիյաթլարը եիլքէլլէքտէ տիր:	

ՍԱՐՐԱՅԻՅԷ

Նարուլէն 22-40 ֆրանք
Օսմ. լիւրաք 22-30 ալթուս ֆրանք

ՊԱՐԴԱԼԻՅԷ

Վարնա բիսցասընտա պագալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթլը, ալթուս ֆրանք իլէ:

ԳԱԼԼԷ	1.50/1.70
Շէֆէր Նէմցէ	51
» (Բէսմէ) սանտըգ	27.20
Բիլիլն ճարոն չուվալը եօգ	—
» Ֆիլիպէ »	31. —
» Ինիլիլք »	25.26
» Բիզոն »	45. —
ԿԱԶ Սանտըգ	6.70
Զէթիլն ԵԱԼԸ քիւր	— 85/ — 90
ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻՍ	— 40

ԻՐԱՆԻԱՐԻ ՊԱՏԱՍԲԱՆՆԵՐԸ

Տ. Ս. Դ., Սարաւպէյ. — Մեր փնտաճ Պաղտասարը Բաղէշի գաւառէն Յորկոնք գիւղացի է. իսկ ձեր Պաղտասար Մանուկեան ըսած անձը Մշոյ գաւառէն Յորնք գիւղէն է կըսէք: Հետեւարար տարբեր անձեր են, չիտիլ պէտք չէ:

ԾԱՌՈՒ ԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. անգամ տպագրուելով աւելի ճոխացած ու բարեփոխուած է, եւ հակառակ գնոյն աճանութեանը կը պարուսակէ ազգային հին ու նոր խիստ շատ երգեր: Գին 1 ձր.

ՆէՏԱ կամ ՄՐՄՈՒ ՊԱՏԱՍԲԱՆ, Պուկարիոյ ազատութեան անաղ Պուկար գիւղացիին թուրքերէ կըրած տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ: Շատ հետաքրքրական: Գին 50 ՍԱՆԹ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՂԵՐ: Պատկեր մը ճանաչալատանի իրական կեանքէն, գրեց Դ. Նահապետեան: Զեղչեալ Գին 1 ձր.

Այս գիրքերը ստանալու համար պէտք է գիւմէլ Իրաւունքի խմբագրութեան, բօսթի. ծախքը 10ական սանթիլ միտաղ զրկելով. իսկ գիրքերու արժէքին համար, եթէ ուրիշ գիւրութիւններ պակսին, կընդունուի նամակագրօյմ 10 0/0 զեղչով: